ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 60) 700 103

19.02.14		№	12.4-8/2412-14
Ձեր №			

Ինֆորմացիայի ազատության կենտրոն
ՀԿ իրավաբան՝
Գևորգ Հայրապետյանին

Հարգելի պարոն Հայրապետյան

Ս.թ. փետրվարի 10-ին ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացված Ձեր գրությամբ բարձրացված՝ «Ֆոնդ և կառավարիչ չընտրած քաղաքացիների համար հաշվարկվող և փոխանցվող պարտադիր կուտակային վճարների գումարները որտեղ են պահվելու մինչև ՍԴ որոշումը» հարցի վերաբերյալ հայտնում ենք, որ «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ Օրենք) 7-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն, 2013 թվականի դեկտեմբերի 19-ին ՀՀ ֆինանսների նախարարության կենտրոնական գանձապետարանում այդ նպատակով բացվել են 900008047020 - «Պարտադիր կուտակային բաղադրիչի պարտադիր մասնակցի կողմից կատարվող վճար» (կամուրջ հաշիվ) և 900008047038 - «Պարտադիր կուտակային բաղադրիչի պարտադիր մասնակցի կողմից կատարվող լրավճար» դեպոզիտային հաշիվները:

Գրությամբ ներկայացված՝ «որ իրավական ակտով (ակտերով) է (են) սահմանված մինչև ՍԴ որոշումը ֆոնդ և կառավարիչ չընտրած քաղաքացիների համար հաշվարկվող և փոխանցվող գումարները պահելու պայմանները և կանոնները» հարցի վերաբերյալ հայտնում ենք, որ վերոնշյալ դրույթները կարգավորվում են Օրենքի 8-րդ, 9-րդ, 37-րդ, 38-րդ և 39-րդ հոդվածներով:

Նշված Օրենքը հրապարակված է ՀՀ Պաշտոնական Տեղեկագրի՝ 2010թ. դեկտեմբերի 30-ի թիվ 69(803).1 համարում:

Հարգանքով՝

Արմեն Հայրապետյան

Կատ.՝ Ֆին. շուկայի զարգացման վարչություն
հեռ.՝ 060-700-318